

# ՄՈՆԻՏԱԼԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵԿԻՆՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

## Հավելված 5

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ,ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆԵ ՄՈՆԻՏԱԼԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Քաղվածք ,Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի  
արձանագրության`  
Կողմերի տասնմեկերորդ հանդիպման զեկույցի 5-րդ Հավելվածից

#### Հոդված 1. Փոփոխություն

Ա. Հոդված 2, կետ 5

Արձանագրության 2-րդ հոդվածի 5-րդ կետում ,2Ա-ից 2Ե հոդվածներն բառերին  
պետք է փոխարինեն , 2Ա-ից 2Զ հոդվածներն բառերը:

Բ. Հոդված 2, կետ 8 (ա) և կետ 11

Արձանագրության 2-րդ հոդվածի 8(ա) կետում և 11-րդ կետում ,2Ա-ից 2Ը  
հոդվածներն բառերին պետք է փոխարինեն ,2Ա-ից 2Թ հոդվածներն բառերը:

Գ. Հոդված 2Զ, կետ 8

Արձանագրության 2Զ հոդվածի 7-րդ կետից հետո պետք է ավելացվի հետևյալ  
կետը.

8. Նշված նյութերից մեկը կամ ավելին արտադրող յուրաքանչյուր Կողմ պետք է  
երաշխավորի, որ 2004թ. հունվարի 1-ից սկսած` տասներկու ամսվա ընթացքում և  
հետագա յուրաքանչյուր տասներկուամսյա ժամանակահատվածում Գ Հավելվածի I  
Խմբում նշված վերահսկվող նյութերի արտադրման հաշվարկային մակարդակը չի  
գերազանցի տարեկան միջինը.

ա) Գ Հավելվածի I Խմբում նշված վերահսկվող նյութերի 1989թ. սպառման  
հաշվարկային մակարդակի և Ա Հավելվածի I Խմբում նշված վերահսկվող նյութերի  
1989թ. սպառման հաշվարկային մակարդակի երկու ամբողջ ութ տասներորդական  
տոկոսի գումարը և

բ) Գ Հավելվածի I Խմբում նշված վերահսկվող նյութերի 1989թ. արտադրության  
հաշվարկային մակարդակի և Ա Հավելվածի I Խմբում նշված վերահսկվող նյութերի  
1989թ. արտադրության հաշվարկային մակարդակի երկու ամբողջ ութ  
տասներորդական տոկոսի գումարը:

Այնուամենայնիվ, 5-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում գործող Կողմերի  
առաջնային ներքին պահանջները բավարարելու նպատակով, վերջիններիս  
արտադրության հաշվարկային մակարդակը կարող է, ըստ վերը սահմանված կարգի,

անցնել այդ սահմանը՝ մինչև տասնհինգ տոկոսով գերազանցելով Գ Հավելվածի I Խմբում նշված վերահսկվող նյութերի արտադրության հաշվարկային մակարդակը:

#### Դ. Հավելված 2Թ

Արձանագրության 2Ը հոդվածից հետո պետք է ավելացվի հետևյալ հոդվածը.

### **Հոդված 2Ը. Բրոմքլորմեթան**

Յուրաքանչյուր Կողմ պետք է երաշխավորի, որ 2002թ. հունվարի 1-ից սկսած՝ տասներկու ամսվա ընթացքում և հետագա յուրաքանչյուր տասներկուամսյա ժամանակահատվածում Գ Հավելվածի III խմբում նշված վերահսկվող նյութերի սպառման և արտադրության հաշվարկային մակարդակը չի գերազանցի զրոն: Սույն կետը կիրառելի է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Կողմերը կորոշեն թույլատրելի արտադրության և սպառման այնպիսի ծավալ, որն անհրաժեշտ կլինի, ըստ իրենց միջև ձեռք բերված համաձայնության, էական համարվող կարիքները հոգալու համար:

#### Ե. Հոդված 3

Արձանագրության 3-րդ հոդվածում .2-րդ, 2Ա-ից 2Ը հոդվածներն բառերին պետք է փոխարինեն .2-րդ, 2Ը-ից 2Թ հոդվածներն բառերը:

#### Զ. Հոդված 4, 1 quin և 1 sex կետեր

Արձանագրության 4-րդ հոդվածի 1 qua կետից հետո պետք է ավելացվեն հետևյալ կետերը.

1 quin. Սկսած 2004թ. հունվարի 1-ից՝ յուրաքանչյուր Կողմ պետք է արգելի Գ Հավելվածի I Խմբում նշված վերահսկվող նյութերի ներմուծումը սույն Արձանագրության Կողմ չհանդիսացող ցանկացած պետությունից:

1 sex. Սույն կետի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, յուրաքանչյուր Կողմ պետք է արգելի Գ Հավելվածի III Խմբում նշված վերահսկվող նյութի ներմուծումը սույն Արձանագրության Կողմ չհանդիսացող պետությունից:

#### Է. Հոդված 4, 2 quin և 2 sex կետեր

Արձանագրության 4-րդ հոդվածի 2 qua կետից հետո պետք է ավելացվեն հետևյալ կետերը.

2 quin. Սկսած 2004թ. հունվարի 1-ից՝ յուրաքանչյուր Կողմ պետք է արգելի Գ Հավելվածի I Խմբում նշված վերահսկվող նյութերի արտահանումը սույն Արձանագրության Կողմ չհանդիսացող պետություն:

2 sex. Սույն կետի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, յուրաքանչյուր Կողմ պետք է արգելի Գ Հավելվածի III Խմբում նշված վերահսկվող նյութի արտահանումը Արձանագրության Կողմ չհանդիսացող ցանկացած պետություն:

Ը. Հոդված 4, 5-7-րդ կետեր

Արձանագրության 4-րդ հոդվածի 5-ից 7-րդ կետերում ,Ա և Բ Հավելվածներ, Գ Հավելվածի II Խումբ և Ե Հավելվածն բառերին պետք է փոխարինեն ,Ա, Բ, Գ և Ե Հավելվածներն բառերը:

Թ. Հոդված 4, կետ 8

Արձանագրության 4-րդ հոդվածի 8-րդ կետում ,2Ա-ից 2Ե հոդվածներ, 2Է և 2Ը հոդվածներն բառերին պետք է փոխարինեն ,2Ա -ից 2Թ հոդվածներն բառերը:

Ժ. Հոդված 5, կետ 4

Արձանագրության 5-րդ հոդվածի 4-րդ կետում ,2Ա-ից 2Ը հոդվածներն բառերին պետք է փոխարինեն ,2Ա-ից 2Թ հոդվածներն բառերը:

ԺԱ. Հոդված 5, կետեր 5 և 6

Արձանագրության 5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերում ,2Ա-ից 2Ե հոդվածներն բառերին պետք է փոխարինեն ,2Ա-ից 2Ե և հոդված 2Թ հոդվածներն բառերը:

ԺԲ. Հոդված 5, 8 ter (ա) կետ

Արձանագրության 5-րդ հոդվածի 8 ter (ա) ենթակետի վերջում պետք է ավելացվի հետևյալ նախադասությունը.

Սկսած 2016թ. հունվարի 1-ից՝ սույն հոդվածի 1-ին կետի շրջանակներում գործող ցանկացած Կողմ պետք է կատարի 2Զ հոդվածի 8-րդ կետով սահմանված վերահսկիչ միջոցառումները և, որպես սույն վերահսկիչ միջոցառումների իրականացման հիմք, 2015թ. օգտագործի արտադրության և սպառման մակարդակի միջին հաշվարկը:

ԺԳ. Հոդված 6

Արձանագրության 6-րդ հոդվածի ,2Ա-ից 2Ը հոդվածներն բառերին պետք է փոխարինեն ,2Ա-ից 2Թ հոդվածներն բառերը:

ԺԴ. Հոդված 7, կետ 2

Արձանագրության 7-րդ հոդվածի 2-րդ կետում ,Բ և Գ հոդվածներն բառերին պետք է փոխարինեն ,Բ Հավելված և Գ Հավելվածի I և II Խումբն բառերը:

ԺԵ. Հոդված 7, կետ 3

Արձանագրության 7-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին նախադասությունից հետո պետք է ավելացվի հետևյալ նախադասությունը.

Յուրաքանչյուր Կողմ պետք է Քարտուղարությանը տրամադրի վիճակագրական տվյալներ Ե Հավելվածում թվարկված՝ կարանտինի ժամանակ, ինչպես նաև առաքումից առաջ վերահսկվող նյութերի՝ տարեկան կտրվածքով օգտագործվող քանակության վերաբերյալ:

ԺԶ. Հոդված 10

Արձանագրության 10-րդ հոդվածի 1-ին կետում ,2Ա-ից 2Ե հոդվածներն բառերին պետք է փոխարինեն , 2Ա-ից 2Ե հոդվածներ և 2Թ հոդվածն փոխարինվի:

ԺԷ. Հոդված 17

Արձանագրության 17-րդ հոդվածի ,2Ա-ից 2Ը հոդվածներն փոխարինվեն պետք է փոխարինեն ,2Ա-ից 2Թ հոդվածներն փոխարինվեն:

ԺԸ. Հավելված Գ

Արձանագրության Գ Հավելվածին պետք է ավելացվի հետևյալ Խումբը.

Խումբ	Նյութ	Իզոմերների քանակը	Օզոնի քայքայում
III Խումբ	CH <sub>2</sub> BrC բրոմբլորմեթան	1	0.12

## Հոդված 2. Կապը 1997թ. կատարված փոփոխության հետ

Ոչ մի երկիր կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություն չի կարող ի պահ հանձնել սույն Փոփոխության որևէ վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին որևէ փաստաթուղթ, եթե նա նախօրոք կամ համաժամանակյա կարգով չի ներկայացրել 1997թ. սեպտեմբերի 17-ին Մոնրեալում կայացած Կողմերի իններորդ հանդիպման ժամանակ ընդունված Փոփոխությանն առնչվող այդպիսի փաստաթուղթ:

## Հոդված 3. Ուժի մեջ մտնելը

1. Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2001թ. հունվարի 1-ին՝ պայմանով, որ Կողմերի կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային

կազմակերպությունների կողմից ի պահ են հանձնվել ,Օգոսային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի Արձանագրության վավերացման, ընդունման կամ հաստատման մասին առնվազն քսան փաստաթուղթ: Մինչ հիշյալ ամսաթիվը սույն պայմանը չկատարելու դեպքում Փոփոխությունն ուժի մեջ է մտնում պայմանը կատարելու օրվան հաջորդող իննսուներորդ օրը:

2. 1-ին կետի նպատակների համար՝ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության կողմից ի պահ հանձնված ցանկացած նման փաստաթուղթ չի համարվի հավելյալ նման կազմակերպության անդամ պետությունների կողմից ի պահ հանձնված փաստաթղթերին:

3. Սույն Փոփոխության՝ 1-ին կետում սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո Արձանագրության ցանկացած այլ Կողմի համար այն ուժի մեջ է մտնում Կողմի վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ հանձնելու օրվան հաջորդող իննսուներորդ օրը:

*Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2009թ. հունվարի 18-ին:*